ԴԱՍԵՐ

ՀԱՅՈՑ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՆԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԼՍԱՐԱՆԻ մը յետին տարւոյ աշակերտաց առջեւ խօսուած շարք մը ճառերու կամաքն է որ *Հայոց և Հայաստանի Հնագոյն պատմութեան դասեր* անուամբ կը ներկայացնենք մեր ընթերցասէր եւ ազգասէր հասարակութեան։ Այս պատմուս մինչ հայկական հնութիւնք կը հետազօտուին ու կ'ուսումնասիրուին թէ եւրոպական եւ թէ ազգային բանասէրներէ, եւ ընդհանուր կամ մասնական Հայոց պատմութիւններ կը հրատարակուին ամէն կողմ, աւելորդ չհամարուեցաւ ընդհանուր ազգային պատմութեան վրայ ընդարձակ ուսում հասիրութեան մը այս սկզբնական բաժինը (որ կը բովանդակէ Ալրարդեան կամ Նախապատմական շրջանը) հրատարակել համառօտուած ու սեղմուած։

Այս աշխատասիրութեան համար չենք ունեցած յատկապէս աղբիւր մը որուն հետեւած ըլլանք ընդհանրապէս, այլ անձնական դիտողութեանց հիման վրայ մի առ մի քննած ու համեմատած ենք մինչեւ հիմայ մեզի ծանօթ թէ ազգային եւ թէ մասնաւանդ եւրոպական բանասիրաց հրատարակութիւնները, երբեմն նաեւ առանձնական թղթակցութեամբ բանակցած։ Գործոյս ընթացքին մէջ պիտի յիշենք միայն մի քանի անունները, որոնց հեղինակութիւնը անհրաժեշտ է կամ մեր տեսութիւնքը հաստատելու, կամ իրենց տեսութեանց տարբերութիւնը ցուցնելու համար։

Կը կանխենք ըսելու որ գծուած սահմանները չեն ներեր գործիս մէջ սմփոփելու մանրակրկիտ ուսումնասիրութիւններ յիշատակուած զանազան կէտերու նկատմամբ, որոնց մէջ բանասիրաց կարծիքը բոլորովին կը տարբերին իրարմէ, յաճախ մինչեւ իսկ հակոսնեայ հանդիսանալով, եւ անգամ մ'ալ ստուգելով դարաւոր առածը, «Որքան մարդիկ, այնքան կարծիք»։

Եւ ԿԱՐԾԻՔ–ի երեւոյթի տակ կ'ուզենք որ նկատուին նաեւ մեր տեսութիւնք որ ցայսօր յեղյեղուածներուն չեն համապատասխաներ։ Հակառակ մեզի բերուած *գիտական ապացոյցները* պիտի գիտնանք յարգել ու գնահատել, լուելով միւս ամէն ընդդիմաբանութեանց նկատմամբ, ի զուր ժամավաճառութենէ զգուշանալու համար։

963
digitised by A.R.A.R.@

Ա. — Ներածութիւն. — 1. Նիւթիւն և առարկայ պատմութեան. — 2. Իմաստասիրութիւն պատմութեան. — 3. Բաժանումն պատմութեան — շրջանք — դարք — ազգք։

1. — Շարժումն և փոփոխումն երկու անհրաժեշտ պէտքեր են ստեղծեալ բնութեան մէջ որոնց պիտի հպատակի ամէն էակ կամ գոյութիւն՝ եթէ անկենդան ըլլայ և եթէ կենդանի։ Դարեր կը հոլովին և անոնց հետ ամբողջ մարդկային ընկերութիւններ կը ծնանին ու կ'անյայտանան, երբեմն բոլորովին աննշան ու առանց հետք մը թողու, և երբեմն ալ իւր լուսաւոր հետքեր գծելով իրենց ետևէն. և այս հետքերը, այս լուսաւոր գծերը, կ'ըլլան ապագայ սերնդոց համար մատունք և աստիճանք անվերջ սանդղոյ մը որ մէկ կողմանէ կը բարձրանայ մինչև դարերու ծագման վայրկեանը, և որ միւս կողմանէ կը իջնարհի մինչև ոչընչութեան անդունդին յատակը, ուր պիտի սուզուի վերստին ամէն ինչ երկրաւոր՝ որ շարժման և փոփոխման ենթակայ ստեղծուած է։ Այս դարերու թռիչքն է որ կը կազմէ ներդաշնակ երգ մը մերթ ադու և նուազ շեշտերով, երբեմն ալ ուժգին շռինդով։ Կ'երգէ և կը պատմէ ինչ որ ի սկզբանէ հետէ կեանք մ'ունեցած ու ապրած է, և կամ մանաւանդ ապրած ու գործած է երկրիս մակերևոյթին վրայ գիտակից զգացմամբ ու կիրքերով։ Այս դարերու երգն է որ կ'անուանուի պատմութիւն։

2. — Կ'ըսուի Բնական պատմութիւն երբ կ'երգէ բնութեան տարերաց՝ անգիտակից և աստուածադիր օրինաց հպատակելով շարժումն ու փոփոխումն։

Կ'ըսուի Մարդկային պատմութիւն կամ ազգաց պատմութիւն երբ դարերու մէջ ապրած մարդկութեան կիրքերն ու գործերն աւանդէ։

3. — Ազգեր որ երկրիս վրայ կը կազմուին յանկարծ՝ ի սկզբան իրրև փոքրիկ ընտանիք կամ խումբեր ձևացնելով, և հետզհետէ ալեաց նման կը բարդուին ու կը մանչեն, կը կռուին իրարու հետ, կենաց պահեստի կամ փառասիրութեան անյագ տենչերով, կը փշրեն ու կը փշրուին նոր ազգերու ծնունդ տալով, ահա առարկայ պատմութեան, այն մեծ ներդաշնակութեան որոյ մէն մի շեշտերն ու նօթերը կը կազմեն դարեր ու թագաւորութիւնք։

4. — Կիկերոն կը սահմանէ պատմութիւնը, իբրև վկայ ժամանակաց — լոյս ճշմարտութեան — դպրոց կեանաց։

Վկայ է ժամանակաց երբ կը հիւսէ մեր աչաց առջև բոլոր դարերու ոստայնը, կը շարէ մի առ մի ազգերն ու պետութիւնները որ անոնց մէջ ապրած ու կռուած են և մեռած։ Ղեռունի մ'է իւր ալեօք ու հնութեամբ պատկառելի, ականատես այն ամէն դէպքերու և յեղափոխութեանց որոնք յուզեր են մարդկային ազգերը և կերպարանափոխ ըրած մարդկային ընկերութեան կենցաղը երկրիս վրայ։

Լոյս ճշմարտութեան երբ դարերու հնացեալ խաւերը պրպտելով կը հանէ յերեան նոյն իսկ ամենափոքր ու չնչին դէպքեր՝ որոնց արդիւնք եղած են յաճախ պետութեանց կանգնումն ու կործանումը։ Պատմութեան լուսով միայն կրնանք տեսնել այսօր այն կապերը որոնք իրարու կը զօդեն ազգերը։ Ինչպէս ժամանակաց մշուշին մէջ յանկարծ շքեղ փայլով մը կը ցոլայ բաբելական կամ պարթևական պետութիւնը, և ինչպէս կը խոնարհի յանկարծ մակեդոնացի ափ մը բաղդախնդիրներու ձեռքով։ Ինչ է յունական իմաստութեան աղբիւրն կամ ուստի՞ յառաջ կուգայ հռովմէական անխախտ արիական հոգին, պատմութեան լոյսը միայն ճշմարտապէս կը ցուցնէ մեզի։

Բայց պատմութիւնն է միանգամայն դրպրոց կեանաց որոյ էջերու մէջ ապագայ սերունդներ պիտի կարդան դասեր ու խրատներ հիմնուած դարերու անսխալ փորձառութեան վրայ։ Հոն կը տեսնուի թէ ինչ է բուն յաղթանակի մը զաղտնիքը, կամ պարտութեան մ'ադեսից դարմանը։ Որոնք են աղբիւրք՝ ազգաց երջանկութիւն ու բարբարութիւն բղխողք, որպիսի՞ կառավարութեամբ կարող են քաղաքներ ու պետութիւնք տնտեսապէս և բարոյապէս զար-

digitised by A.R.A.R.@

զանալ, և ոյք են վաճառականական յարաբերութեանց աղբերք և ուղիք։

5. — Այս տեսութիւնք յառաջ կը բերեն երկար ժամանակ պատմագիրներու անծանօթ մնացած գաղտնիք մը, պատմութեան իմաստասիրութիւնը, առանց որոյ պատմիչը կ'ընծայէ լոկ շարք մը դէպքերու և անձանց որոնք չունին քնաւ կեանք և կը նմանին թանգարանի կամ դիրձակաց խանութներու մէջ տարազներ ցուցնելու համար զգեստաւորուած փայտերու։ Դարու մը պատկերը կամ երկրի մը կեանքը նկարագրելու համար բաւական չէ որ պատմաբանը մի առ մի շարէ պատահած դէպքերը, թագաւորաց յաջորդութիւնքը, պատերազմներու նկարագիրը, կամ խօսի գանազան օրէնքներու և սովորութեանց վրայ, և թուականներով խճողէ իւր էջերը, այլ պէտք է ազգի մը զործունէութեան ամէն մէկ տարբերը գտնէ և ուսումնասիրէ զանոնք մղող շարժառիթներով. քաղաքական անցքերու վրայ յաւելու արուեստից պատմութիւնը, ասոնց հիւսէ կրօնական զգացմանց արտայայտութիւնքն ու պաշտամունքը, ժողովրդոց բարքը ընտանեկան և քաղաքային ընկերական կազմակերպութեանց մէջ, գծագրէ նոյն իսկ հողն ու մթնոլորտը ուր ժողովուրդն ապրած է։ Առանց այս կէտիս անկարելի է ըմբռնել թէ ինչո՞ւ ազատ ու փոփոխամիտ է յոյնն, և ինչ է հայու անմիաբան և սեռեռուն բնութեան պատճառը։ Պատմութիւնը մարդկային ընկերութեանց գիտութիւնն է, հաւելի մ'է ճշմարիտ, կենդանի և խօսուն որոյ մէջ ցոլացած կ'ապրի ամբողջ հին դարերու մարդկութիւնը վառ գոյներով. անցեալոյն հաւատարիմ շարժանկարն է ձայնագրի հետ զուգուած։ Ո՛րքան տարբեր են իրարմէ հին պատմագիրք և այսօրուան պատմիչք, ո՞րքան ցամաք ու անկենդան են առաջինք իրենց ամենայն բանաստեղծական թռիչներով հանդերձ, և ո՞րքան կենդանի խօսուն են արդիք իրենց քննադատական խուզարկութեամբք ու ցամաք կարծուած համառօտութեամբն հանդերձ։ Որովհետև հիները աւանդած են դէպքեր ու դէմքեր, իսկ արդիք կը գծեն հոգիներ ու կիրքեր։

6. — Մակայն հին ու նոր պատմչաց մէջի այս տարբերութիւնն ալ եղած է աստիճանաբար և ոչ թէ յանկարծական մղման մը զօրութեամբ։ Եթէ Հերոդոտ անմահանուն պատմչաց հայրը նկարագրած է մեզ լոկ գանազան դէպքեր, ստուգութիւնն ու առասպելն հիւսելով իրարու՝ լսած աւանդութեանց համաձայն, թռչկիդիդէսի մէջ նկարագրուած կը գտնենք արդէն անձինքը, ժողովուրդներ և գիրենք շարժող օրէնքն ու վարչութիւնը։ Պայլ մ'աւելի յառաջ կ'առնու Պոլիբիոս երբ մի առ մի աւանդած դէպքերու գանազան պարագայները կը քննէ։ Մակայն բուն իրրև հիմնադիր պատմութեան իմաստասիրութեան, և առաջին ուղեցոյցք արդի պատմական դրութեան են անտարակոյս Ֆ. Օգոստինոս իւր «Ցաղագս քաղաքին Աստուծոյ» գրութեամբ և Պոսսէ՝ իւր «Խօսք ի վէպս ազգաց» համառօտ տեսութեամբք։ Իսկ լրումն և ծայրագոյն կատարելագործութիւն այդ պատմական–իմաստասիրական դրութեան կ'ընծայեն մեզ Կիզոյ և մանաւանդ Մոմսէն իւր «Հռովմէական պատմութեամբ»։ Հոս է որ յանկարծ մեր շրջակայ շարժող ու յուզուող մարդկութիւնը կ'աներևութանայ, կ'աներևութանայ բոլոր արդի աշխարհն, և ընթերցման պահուն իրրև բազմադարեան ոգիներ կը պտտինք մենք բուն այն տեղերն ուր կոխեր են հռովմէական քանակներ, հանդիսադիր կ'ելլանք անոնց ամէն մէկ շարժմանց, կրից ու զգացմանց։

7. — Ըստ այսմ դրութեան ամփոփելով մեր խօսքը զուտ հայ ազգին պատմութեան վրայ, պիտի դիտենք անոր ծագումն դարերու մշուշին մէջ պարուրուած և գիտնոց կարծիքներու ալիքներէ ծփուած ու տարուբերուած ժամանակի յորձանաց մէջ։ Պիտի տեսնենք համառօտիւ ինչ եղած է զանազան դարերու մէջ մեր ազգին բարոյական, տնտեսական, քաղաքական կազմակերպութիւնն, իւր յաղթութիւնքն ու պարտութիւնքը, արուեստներն ու կրօնքը

digitised by A.R.A.R.@

ոով ուրիշ ազգաց հետ զոյգ կրցեր է կազմել ու պահպանել ազգային ինքնուրոյն կացութիւն մը։

Եւ ինչպէս ընդհանուր պատմութիւնը՝ որ կրնայ դիտուիլ զանազան հայեացքներով, բաժնելով զայն շրջաններու, դարերու, ազգերու եայլն [1], այսպէս ալ մեր տոհմային պատմութիւնը կարող ենք նկատել ըստ իւրաքանչիւր դարերու և ըստ զանազան շրջաններու։ Սակայն մինչդեռ առաջին (դարերու) տեսակէտով մեր պատմութիւնը երկարագոյն և միօրինակ ձև մը կրնայ առնուլ դասաւանդութեան կամ գրութեան մէջ, երկրորդը (շրջաններու բաժանումն) աւելի սահուն, համառօտ ընթացք մ'ունենալով հանդերձ, աւելի պայծառ կը ցոլացնէ ազգային կեանքի էական կէտերն ու դէմքերը։

8. — Այսու ուրեմն հայկական պատմութիւնն ալ կը բաժնենք հետեւեալ շրջաններու

Ա. — Նախապատմական և Ուրարդեան

Բ. — Մակեդոնական և Սելևկեան

Գ. — Արշակունեաց

Դ. — Բիւզանդական և Մարզպանաց (Նախարարական Ա.)

Ե. — Բագրատունեաց և Արծրունեաց (Նախարարական Բ.)

Զ. — Ռուբինեան և Զմիրայից

Է. — Գեղութեան և անիշխանութեան և կը հետազօտենք այս զանազան շրջաններու մէջ հայկական կեանքը զանազան հայեացքներու տակ քաղաքական, տնտեսական, կրօնական, արուեստական կողմերէ։

Բ. — Ներածութիւն. — Աղբերք պատմութեան հայոց. 1. Գեղմունք. — 2. Ազգագրութիւնք - Ժողովրդական երգք. — 3. Մատենագիրք - Օտարք - Ազգայինք. — 4. Գիւանք։

9. — Հայ ազգը մարդկային ցեղի ամենէն աւելի հին ազգերէն մին է. իւր պատմութիւնը կը սկսի նոյն ինքն մարդկութեան հետ դարերու մշուշին մէջ անյայտացած։ « Հակայ մ'է անմահ, կ'ըսէ օտարազգի հեղինակ [2] մը, որ իւր ճակտին վրայ կը կրէ քառասուն և չորս դարերու համբոյրը։ Իւր գոյութիւնը փոփոխ հոլովում մ'է մահու և կենաց. չկայ պատմական շրջան մը յորում հայ անունը հորիզոնի վրայ չփայլի։ Բաբելոնի աւանդական աշտարակին մէջ և Պեղլինի դաշնադրութեան մէջ, Տրոյիոյ պատերազմին մէջ և յետին Իուս և Թուրք պատերազմի մէջ, հայը միշտ ներկայ է։ Նա ճանչցած է ամէն կրօնք։ Աբրահամու միաստուածութեան նահապետական պաշտօնէն մինչև ամերիկացի միսիոնարի Ս. Դիրք ընթեռնուն իւր առջև. նա հանդիսատես եղած է մարդկային խղճի կրօնական ամէն մէկ արտայայտութեանց։ Այցելեց Ասուրական, Բաբելոնական, փիւնիկեան սրբավայրերը, մտաւ Իսրայէլի տաճարին մէջ, կանգնեց և խորտակեց Մոգերու բագինները, ողջունեց Հռովմայ և Աթէնքի աստուածութիւնքը, խօսեցաւ Յիսուսի հետ Երուսաղեմայ մէջ, աղօթեց ի Ս. Սոֆիա և Ս. Պետրոսի տաճարին մէջ, լսեց Մարգարէին ազգականաց և ընկերներուն Ղուրան ընթեռնուլն։ Կռուեցաւ ամենազօրաւոր պետութեանց հետ։ Բաբելոն, Ասորեստան, Պարսիկք, Մարք, Մեծն Աղեքսանդր, Հռովմ, Բիւզանդիոն, Ճինկիզ խան, Լէնկթիմուր զնահատեցին այս հակայն։ Աբեմտից զանազան իշխանազունք, քահանայապետք, ամէնէն աւելի ահաւոր ծովային հասարակապետութիւնը պատուե-

---

1. Շրջաններու համեմատ կ'ունենանք նախ Նախապատմական շրջան և Բ. Պատմական շրջան։ — Այս պատմական շրջանն ալ կը պարունակէ իր մէջ յոյժ և հռովմէական դասական ազգաց պատմութիւնը, բիւզանդական կայսրութեան, միւիւն դարու, նոր ազգաց և ժամանակակից պատմութիւններն։ Դարերու համեմատ՝ պատմութիւնը կրնայ բաժնուիլ հին ազգաց, միւիւն դարու, նոր ազգաց եայլն. իսկ ազգաց նկատմամբ թէ՛ կարելի է մի առ մի իւրաքանչիւր ազգերն ուսումնասիրել և թէ ընդհանուր կերպով մը զամէնքն ի միասին. այս պարագայիս կը բաժնուի Ասիրեան և Սեմական ազգաց պատմութիւն։

2. ANATOLIO LATINO. — Gli Armeni e Zeitun. Firenze. 1899.

digitised by A.R.A.R.@

ցին զայն բարեկամութեամբ և յատուկ համակրանքով։ Միջնադարեան Եւրոպան, խաչակիր ըլլալով և Լուսիա անցնելով, իւր յաղթանակները կը պարտի Կիլիկիոյ թագաւորաց օժանդակութեան, և ի պատիժ այս օժանդակութեան խլամութիւնը խողխողեց զՀայաստան։ Վերջին թագաւորն Լևոն Զ. Դահիրէի միւսիւլման բանտերու մէջ և յաքսորանս քաւեց Եւրոպան սիրած ըլլալու մեղքը»։

Այսպիսի ընդարձակ պատմութեան մը զանազան երեսոյթներն ուսումնասիրելու համար, չբաւեր անշուշտ ինչ որ ցայսօր վեր ի վերոյ աւանդուած է ազգային և օտար պատմիչներէ, հարկ է որ զանազան շրջաններու համեմատ դիմենք ստուգագոյն և աւելի յորդ աղբիւրներու, եթէ նոր յայտնութիւններ գտնելու և եթէ հին աւանդութիւնները զտելու և մաքրելու համար։ Այսպիսի աղբիւրներու առաջինն պիտի ըլլան Պեղումներ։

10. — Դարերը իրենց արագ սլացքով կը մղեն կը տանին մարդկութիւն մը իւր ամէն գործերով ու ճարտարարուեստներով և փոշի մը կը ցանեն դիւցազնութեանց հսկայական յուշարձաններու վրայ, որոնք հետզհետէ կ'աւերուին կը փշրին մինչև իսկ բոլորովին անտեսանելի կերպով կը թաղուին երկրիս խորերը։ Հոն պէտք է որ պատմիչը մտնէ բահով ու բրչով և հանէ ինչ որ թաքուն աւանդուած կայ հին դարերէ։ Հոն պիտի գտնենք արձաններ կոթողներ՝ յաւիտենական յիշատակը փառապանծ անցելոյ մը. արձաններ ու շիրիմներ կանգնուած առաքինական վեհ գործեր անմահացնելու համար, մահարձաններ՝ խորտակուած ու քանդուած, որոնց վրայ դեռ կը թեւածէ վրէժխնդրութեան զայրոյթի բռնութիւնը։

Այս անխօս արձաններէ աւելի պիտի գտնենք նաև խօսուն մնացորդներ, գրաւոր արձանագրութիւններ քարերու վրայ, որոնք պիտի լսեցնեն մեզ մեր ամենահին նախնեաց ձայնն ու աւանդութիւնները, հոն պիտի կարդանք իրենց յաղթանակներուն ու պարտութեանց մանրամասն նկարագիրը, աստուածոց պաշտման աղերսանաց ու գոհաբանական մաղթանքն ու արարողութիւնները, քաղաքական վարչութեանց օրէնքները։

Անոնց հետ խառն պիտի գտնուին նաև բազմաթիւ դրամներ, հին ճոխութեանց մնացորդներ, որոնք սակայն երբեմն շատ գանձերէ վեր պիտի համարուին յայտնելով մեզ թագաւորներու, իշխաններու անուններ ու թուականներ բոլորովին մոռցուած ու թաղուած հնութեան թեերուն տակ։ Պիտի գտնենք դարձեալ բազմաթիւ առարկայներ, մնացորդք արուեստագէտ ճարտարութեանց, կահեր տնական պիտոյից սահմանուած, զարդեր պճնասէր տիկնանց, ջրամուղներ, ուղիներ և այլն, որոնք պիտի յայտնեն մեզ իւրաքանչիւր դարերու մէջ եղած ազգային զարգացման չափը, ստոյգ պատկերելով իրրև հայելի հայ արքունիքը, ազնուական պալատականը, արուեստաւորն ու երկրագործը իւր կենցաղին ու տնական սովորութեանց ու գործառնութեանց մէջ։

11. — Դժբաղդաբար դեռ այսպիսի պեղումներ, գիտնականօրէն կատարուած հայ հողի վրայ, կը պակսին բոլորովին և յոյսերնիս առ այժմ կը մնայ լոկ ապագայ ուսումնասիրաց և հոգ մեկենասներու յօժարութեան վրայ։ Ինչ որ իրրև պեղում կրնանք այսօր յիշատակել, են Վանայ ծովու շրջակայքը կատարուածներն, որոնք տուած են մեզ Մինուասայ և Խուշասայ հսկայ կոթողներն արձանագրութեամբ, վահանն արքունի, և բեկորներ զանազան պղնձեայ առարկաներու։ Դոյնպէս Զուարթնոց եկեղեցւոյ և Անւոյ պեղումներն՝ որոնցմէ ունինք Գագկայ արձանը և հեռաքննական յայտնութիւնք Անւոյ բուն տեղւոյն և զանազան անգամ շինութեանց և աւերմանց վրայ, բոլորովին տարբեր ցայսօր եղած գրաւոր աւանդութիւններէ։ Այսպէս կրնանք յիշատակել նաև Կարնոյ զաւառին մէջ գտնուած դիպուածական մի քանի հնութիւնք և արձանագրութիւնք և մանաւանդ ի Մարաշ գտնուած Հեթեան հսկայ առիւծը, որ ցայսօր գտնուածներու

digitised by A.R.A.R.@

մէջ ամենամեծ երևոյթն ունի։ Սակայն եթէ դեռ չենք կրնար մեր հողին ծածկած գանձերը գործածել, կրնանք օգտուիլ օտար հողերու մէջ եղած պեղումներու արտադրութիւններէն, յորս գլխաւորներն են Ասորական — Բաբելոնական բևեռագիրը, մարական պարսկական արձանագրութիւնք Խորսապատու, Պեհիստունի, Հեթեան յիշատակք Փոքր Ասիոյ, և մանաւանդ եգիպտական մեհենաց սրբագիրք և բաբիրոսք։ Ասոնց մէջ ունինք շատ յիշատակութիւնք պատերազմաց ու վաճառականական յարաբերութեանց հայ ազգի նախահայրերու հետ։

12. — Պատմութեան իբրև երկրորդ աղբիւր է Նախնեաց աւանդութիւնն՝ եթէ բերանացի կերպով դարերու մէջ պահուած, և եթէ շրջանի մը մէջ գրի առնուելով մինչև առ մեզ հասած։ Չկայ ազգ մը կամ ժողովուրդ մը որ իւր աւանդութիւնքն ունեցած չըլլայ։ Բայց մանաւանդ սեպհական է այն ազգաց ու ժողովրդոց որոնք Հայոց նման ստիպուած են երկար ամեռուան ամիսներ բնակարաններու խորն ամփոփուիլ ու խարոյկի դիմաց շարուած ջեռնուլ ու խօսիլ։ Այս պահուն է որ ա-ռաւելեան խանդը կը սկսի իւր ստեղծագործութիւնները, կ'երգէ քաջազանց դիւցազնութիւնքը, թագաւորաց պերճութիւնն ու փառքը, յաղթանակի հանդէսներն ու մահական ողբերը։ Այս երգերու մէջ ամենաչնչին դէպքերն անգամ կ'առնուն մեծ համեմատութիւններ և բերնէ բերան աւանդուելով իրական դէպքի մը կմախքն հետզհետէ կ'ուռճանայ կը զարդարուի հիացուցիչ հանգամանքներով, ճշմարտութեան կը փոխանակէ առասպելական եւրեոյթ մը և գործիչ մարդը կ'ըլլայ դիւցազն և նաև ամենակարող ոգի։ Գողթան երգեր՝ որոնց պատառիկներ պահուած են մեր Նախնի մատենագրաց քով, Դաւթի—Մհերի կամ Սասմայ Մուռերու դիւցազներգութիւնը, գաւառական բազմաթիւ զրոյցներ ու գուսաներգութիւնք, կը կազմեն ազգային ժողովրդական երգարդ որոնց մէջ մարմնացած է մեր հին նախնեաց պատմական աւանդութիւնն ուր շատ գողտր կերպով նկարագրուած են զանազան կրօնական, քաղաքային, ընտանեկան հանդէսներ ու սովորութիւնք։

13. — Երրորդ և գլխաւոր աղբիւր մ'ալ են մատենագիրք որոնք այլևայլ դարերու մէջ նկարագրած են ինչ որ աչքի տեսած են իրենք, կամ ինչ որ իրենց հայրերու բերնէ լսած են՝ աւանդուած հինեռու նկատմամբ։

Դժբաղդաբար բուն ազգային մատենագիրներ չունինք հինգերորդ դարէ առաջ և կամ իրենց մատենագրութիւնք բոլորովին կորսուած են այդ դարէն առաջ և միայն այդ դարու մէջ ազգային աւանդութիւնը կը մարմնանայ գրութեան ներքև։ Իսկ օտար մատենագիրներէ, որոնց գրութիւնք հայ պատմութեան զանազան կէտերու վրայ լոյս կը սփռեն, յիշելու ենք գլխաւորաբար Հերոդոտոս, Քսենոփոն, Պոլիբիոս, Ստրաբոն, Պլուտարքոս, Ցակիտոս, շարք մը Բիւզանդական պատմիչներու, խաչակրաց դէպքերու միջնադարեան երգիչները և նոյն իսկ բանաստեղծական մի քանի գործեր Հոմերոսէ, Վիրգիլիոսէ սկսեալ մինչև ի Դանտէ, Գոռնէյլ և արդի բանաստեղծները որոնց տողերու մէջ երբեմն կը հանդիպինք հայկական նիւթեր հիւսուած կամ անուններ յիշուած։ Մի քանի անգամ Հայաստանի անունը կը յիշատակուի նաև Ս. Գրոց այլևայլ բաժիններու մէջ։

14. — Սակայն ինչ յարգ որ ունին հին պատմութեան համար պեղումներէ հանուած արձանք և արձանագրութիւնք, միջնադարեան և արդի պատմութեան համար ալ նոյն յարգն ու արժէքն ունին դիւանեներու խորշերը պահուած վաւերաթղթերու որոնք մեզ կ'աւանդեն պաշտօնական երևոյթի տակ՝ Հայ ժողովրդեան այլևայլ աշխարհներ ու քաղաքներ գաղթական թափառումները։ Ասոնց մէջ կը տեսնենք զանազան վաճառականական և վարչական արտօնութիւնք գաղթական Հայոց տրուած հիւրասէր ապաստաններէ, ամուսնական այլ և այլ կապակցութիւնք հայ և իւր հիւրընկալ ազգաց միջև, մինչև որ

digitised by A.R.A.R.@

յանախ հայ տարրը իւր բնորոշ լեզուն ու յատկութիւնը կը կորսնցնէ օտար աստ-ղերու տակ և գրեթէ բոլորովին կը ձուլուի այդ ազգերու հետ, քիչ անգամ միայն պա-հելով իւր եկեղեցական արարողութիւնքն, և յանախ՝ միայն իր հայ անունը։

Այսպիսի դիւաններ՝ միջնադարեան հա-յոց պատմութեան համար, ունինք մաս-նաւորապէս ի Սպանիա, Հոլանտիոյ, Գաղ-ղիոյ և Գերմանիոյ զանազան քաղաքաց մէջ և մանաւանդ Յիտալիա՝ ի Վենետիկ, ի Ճենովա և ուրիշ բազմաթիւ քաղաքնե-րու և գիւղերու մէջ և հուսկ ի Հռովմ ի Վատիկան ուր բազմաթիւ կոնդակներ ու թղթակցութիւնք, պահուած են, քահանա-յապետաց և հայ թագաւորաց ու հայրա-պետաց յարաբերութեանց վկայք՝ խաչա-կրութեան զանազան դէպքերու նկատմամբ, և փոխադարձ օգնութեանց՝ արեւելից խառ-նաշփոթ աւերմանց և ասպատակութեանց միջոց։

Նորագոյն պատմութեան համար ալ ունինք ընդհանրապէս չափաւոր հաւաք-մունք վաւերագիրներու այլեւայլ կեդրոն-ներու կամ վանական հաստատութեանց դիւաններու մէջ, ինչպէս Էջմիածնայ կա-թողիկոսական դիւանի, ի Վանս մեր դիւա-նի և Նախնի Հարց թղթակցութեանց մէջ, ի Վիեննա Մխիթ. վանքին մէջ, նաև ի Կ. Պոլիս Մեծ. Անտոնեան Հարց դիւանի հաւաքմանց մէջ, և այլն։

Հ. Յ. ԱՒԳԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ

Հատուած երրորդ

Հ. Միքայէլ Վարդապետ Զամչեան կը գրէ թէ Արտաշէսի որդւոյն Արտաւազդ թագաւորին օրերն, երեւելի էր Հայոց աշ-խարհքին մէջ Դատ իշխանը, զոր Պողիւ-բիոս Միհրդատ կը կոչէ։ Բայց Նոյն Հ. Միքայէլին ժամանակագրութեան իսկ հա-մեմատ պէտք է ըսել որ Միհրդատ կամ Դատ իշխանը ժամանակով առաջ էր Աբ-տաւազդայ թագաւորելէն։ Որովհեան Մի-հրդատայ վրայ խօսք կ'ըլլայ պատմու-թեան մէջ Մեծին Անտիոքոսի որդւոյն Սելևկոս փիլոպատորի ժամանակներն որ թագաւորեց 187 – 176. ուր կ'անուանի Միհրդատ նախարար Փոքրուն Հայոց, ինձ կը թուի արևմտեայ հիւսիսային մասին, այսինքն անոր, զոր Պոդոմէոս կը ծրագրէ Սեբաստիոյ հետ մէկ տեղ, որ անուանե-ցաւ առաջին Հայք։

Նոյն ժամանակները Փոքր Ասիոյ թա-գաւորաց մէջ մեծ պատերազմ բացուեր էր. և Միհրդատ նիզակակից էր Փառնակ Բ. Պոնտոսի թագաւորին հետ, Եւմենէսի և անոր դաշնակցաց դէմ. պատերազմը տե-ւեց երկայն ժամանակ։

Պոնտոսի թագաւորութիւնն այս ատեն-ները քանի առաջ կ'երթար աւելի կը զօրանար. և Փառնակ Բ. որպէս զի աւելի ընդարձակէ զայն պաշարեց և առաւ, Եւք-սինեան Պոնտոսի եզերքն եղած Սինոպ քաղաքը որ Մելիտէի գաղթական էր։ Առաւ նաև անոր գաւառն, որ մինչև Ա-լիսի բերանը կը տարածուէր. նոյնպէս Տրապիզոն, կոտիորա և կիրասոն քաղաք-ներն, որ Սինոպցիներուն ձեռքն էին։ Այս պատճառաւ Փոքր Ասիոյ թագաւորներն՝ Եւմենէս Պերգամանի, Արիարաթ Կապա-դովկիոյ և Պրուսիաս Բիւթանիոյ թշնա-մացան իրեն հետ։ Թէպէտ թագաւորաց վէճն Հռովմայ ծերակուտին ատեանն ե-լած էր, բայց Փառնակի խորհուրդն այն էր տարածել իր պետութեան սահմանները։ Ղրկեց ասոր համար իր Լեկրիտ զօրավարը Գաղատիա՝ տասը հազար զօրքով. նաև ուրիշ շատ զօրք գումարելով իր քով, անձամբ արշաւեց Կապադովկիա։ Երբ այս գործոց լուրն Եւմենէս առաւ՝ բարկացաւ և իր Ատտաղոս եղբօրը հետ ճամապարհեց օգնութեան հանելի Նիկակկցին. նաև Ա-րիարաթ Կապադովկիոյ թագաւորն իր զօր-քերովը եկաւ միացաւ անոր հետ Պառնասի քով, և միաբան արշաւեցին Մովկիսենաց երկիրը՝ բայց գործի ձեռք չը զարկած, հա-սան Հռովմի պատգամաւորներն, և անոնց խնդրովը զինադադար եղաւ, և երկու կող-

digitised by A.R.A.R.@